



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lkn
584

ԶԻՆՈՒԱՐԱԿԱՆ

ՕՐԵԴԱՆ

ԾԻԾԱՂԱՇԱՐԺ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՄԻ ԱՅՍՐ



ՆՈՒԻՐԵԱԼ

Ա. Ռ.

ԱՄԻԱԿԱՆ ԲՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓԱԶԵԱՆՔ



Կ. ՊՈԼԻՒ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏՆՏԵՍՆԵԱՆ

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՕԹԵՒԱՆ

Ա. Ն Զ Ի Ն Ք



ԲԱՐԲԱՆԻԿՈՍ. — Գիւղացի :

ՊՐԻՃԻՏԵԼ. — Իւր կինը :

ԲԱՆԿՐԱՏԻՈՍ. — Պրիճիտելի վարժապես սիրահարը :

ԲԵԹՐԱԲՈ. — Ցիսնապես :

ՊՐՈԿՈԼՈՍ. — Ծառայ :

38 586

4584-60

ԶԱԻԵՇՏ Ի ՄԻ ՀԱՆԴԻՍ

Տեսարանն է առ Սարապան լերամբ
ի Թրասիաղ գեղջ :

ՏԵՍԱԲԱՆ Ա.

ՊԵՂՋ-Է ԱԵՆԵ-ԱՀ Տ. ԵՒ ՀԱՅԻՆ ԴԱ-
ՐԱ-ԽԵ ԱԵՆԵ-ԱՀ Տ. ԵՒ ՀԱՅԻՆ ԴԱ-

ՊՐՈԿՈԼՈՍ Եւ Պրիճիտել

ՊՐՈԼ. ՀԱՍԱԾԻԱ ԱԼԵՍ ԱՐԴԵԳԵԿԱԼ ՊՐԻՃԻՏԵԼ ԱԼ-
ԿԻՆ. ԱԵՆՔ ԿԸ ՅՈԳՆԻՆՔ ՄԵՐԵԲՆԻԱ ԿՈւՏԵՆ, ԱԵՆՔ
ԿԸ ԱՀԱԿԵՆՔ, անոնք ԿԸ ՀԱՆՁԵՆ. բան մ'ալ վաս-
տըկինք նէ չինքով շնորհքով՝ ԿԸ գողնան :

ՊՐԻՃ. Հովք պլոտի յարդերը ԿԸ յափշտակէ,
ստակ ստակի ետեւէն ԿԸ վազէ, չե՞ս գիտեր :

ՊՐՈԼ. Ես ալ ասոր ԿԸ բարկանամ որ սա մեծա-

մեծները թէ ունեցածնիս կը գողնան, եւ թէ
միշտ իրաւունք ունին:

Պրին. Աշխարհս միշտ ասանկ եղած է:

Պրոկ. Էրիկդ ինձմէ բաղդաւոր է:

Պրին. Ի՞նչ ըսել է:

Պրոկ. Մեկտեղ սեղան կը նստիս. դեռ ի՞նչ

կուզես:

Պրին. Հնոտանեաց տէր մարդու մը ի՞նչ կըլայ
անկից օդուտ:

Պրոկ. Երկու գլուխ էք, զաւակ չունիք բան
չունիք:

Պրին. Քեզի բան մը ըստ՞մ. թող էրիկս քովս
ըլայ, ուրիշ բան չեմ ուզեր. (Քիւռէ) ի՞նչ ձանձ-
րացուցիչ մարդ:

Պրոկ. Նայէ այս դիշեր դուրսը պիտի մնայ:

Պրին. Նորէն կըսեմ, ես ատոր չեմ հաւնիր:

Պրոկ. Առաջին անգամ կը տեսնեմ որ կին մը
ախուր ըլլայ էրկանը չգալուն վրայ:

Պրին. Անկէ հասկցիր որ տունը չեղած ատեն
մութը կոխելուն ոկտ անկողին կը մտնամ. (Քէ.)
դեռ ալ չերթար:

Պրոկ. Կարելի՞ բան:

Պրին. Եթէ հոս ըլլայիր, մինչեւ հիմա քնացած
էի, (Քէ.) չի հասկնար:

Պրոկ. Անանկ է նէ ելլամ երթամ. գլխու ցաւ
ըլլալ չեմ ուզեր:

Պրին. Գիշեր բարի տէր Պրոկոլ. շատ շտո բա-
րեւ կնկանդ. (Քիւռէ վրայ):

Պրոկ. Գլխուս վրայ, մնաս բարով... չմոռնաս,
էրիկդ երբ գայ ըսես որ իրեն ըսելիք մը ունիմ:

Պրին. (Մէկուսէ) Գոցուելու բելան, (Քայլէ)
կըսեմ, կըսեմ, գիշեր բարի:

Պրոկ. Գիշեր լոյս բարի (Քէնէ):

ՏԵՍՎԼ Բ.

Պրինիսէ Առանեան Վրշը Յիսնապես

ինչ է նէ գոաց. կարծեց թէ կամաւ կընէր.
աղէկ որ երեսս ալ կը բոնէ. եթէ ատանկ չընէի.
ով գիտէ մինչեւ երբ հոս պիտի մնար. այսաբէս
ընելա աղէկ եղաւ. էրիկս ալ չեկաւ զեռ. (Քէնէ
Դաշտական վարժական) գուռը կը զարնեն, ինքը ըլլալու
է, երթամ բանամ. (Հրանտ Վերնայ) ով է այն:

Յիսնա. (Դրական) Զինուորական օթեւան մը:

Պրին. (Մէկ.) Զինուորական օթեւան մը, վայ
ինձ, ի՞նչ ընելու եմ:

Յիս. (Քէնէ) Կը բանաս թէ ոչ. ցրտէն կը սար-
ուրիմ... դուռը:

Պրին. Մինակ եմ:

Յիս. (Քէնէ) Մինակ կամ ընկերով, չէ նէ գու-
ռը վար կ'առնեմ:

Պրին. Ճար չիկայ, բանալու է. (Կը բանայ յիսնա-
պերը կը հնաէ):

Յիս. Ռումը եւ կայծակ. այսափ գժուազ է
դուռ մը բանալդ:

Պրին. Կը վախնացի...:

- Յիս. Սաստանան եմ ես որ կը վախնաս...
Քարբանիկոսին տունը աս չէ՞. ահա տոմսակը:
Պրին. Ճիշդ ան է:
Յիս. Իւր կինը ըլլալու ես:
Պրին. Այս պարոն, (Դէ.) ի՞նչ ժամանակ գտաւ:
Յիս. Շիտակն ըսեմ, էրկնէդ աւելի կը սիրեմ
զքեզ:
Պրին. Կը ձանչնաս գինքը:
Յիս. Զէ բայց ինձի այնպէս կերեւայ:
Պրին. (Դէ.) Ասոր ձեռքէն ի՞նչպէս ազատելու է:
Յիս. Բոէ՛ նազելիս ամուսինդ ուր է:
Պրին. Անտառը գնաց. այս երեկոյ ջիգար:
Յիս. Յարմար տտեն եկեր եմ ձեզի հետ ըն-
կերակցելու:
Պրին. Շնորհակալ եմ. մեղք որ քունս եկած
էք. (Դէ.) աս պակաս էք:
Յիս. Գիւղացին կերպեր մի բանեցներ:
Պրին. Յուսամ որ խոհեմ էք, եւ այս պատե-
հութենէն օգուտ մը չէք քաղեր:
Յիս. Այդ ալ խօսք է. քիչ մը հետդ մնամ.
Քանի մը գաւաթ գինի նետեմ, եւ մինչեւ որ
քունս գայ երգեմ ու խօսիմ. ասկէ աւելին չեմ
ուզեր:
Պրին. Շնորհակալ եմ պարոն, բայց իմ աչքերս
քունէն ծանրացած են. (Դէ.) ի՞նչպէս խալըսելու
է ասոր ձեռքէն:
Յիս. Բայց ես դեռ նոր եկայ, քիչ մը հետս
կենալու ես:
Պրին. Բածդ ըլլալու բան չէ. երբ էրիկս հոս
չըլլայ, շուտ մը սենեակս կը քաշուիմ, եւ չի

- ձանչցած մարդուս հետ չեմ տեսնուիր:
Յիս. Տեսնուէ որ ձանչնաս:
Պրին. Խօսք չե՞ս հասկնար:
Յիս. Քարբանիկոսի պէս ամուսին մը ունենա-
լէդ ետեւ, այսչափ կոտրառուելդ ի՞նչ պիտի ըլլայ:
Պրին. Ի՞նչ ըսել կուղես պարոն. մենք պար-
կեց կողակիցներ եմք. կը հասկնամա:
Յիս. Այսօր ահա կանանց մէջ առաքինին գտայ:
Պրին. Ուղածդ ըսէ, բայց գլացիր որ այս լե-
րանց մէջ կը բնակին պարկեցութիւն եւ առա-
քինութիւն:
Յիս. Տասներկու տարի է որ գինուոր եմ. աշ-
խարհ պտղուցայ, կրնամ ըսել թէ գեռ նմանդ
տեսած չէի:
Պրին. Գեղեցիկ գաղափար մը ունիս կանանց
վրայով:
Յիս. Ի՞նչ ընեմ, գործերնէն կը դատեմ:
Պրին. Լաւ, բայց ձգէ որ գործս երթամ, այս
է քու ճրագդ, այս սանդուղին վեր ելածիդ պէս
պառկելու սենեակդ է:
Յիս. Քունս եկած չէ:
Պրին. Իմա եկաւ, գիշեր բարի:
Յիս. Անունդ ի՞նչ է:
Պրին. Պրիճիտէ:
Յիս. Ի՞նչ անուշիկ անուն. եկուր Պրիճիտէ,
գաղիայի գինույ գաւաթ մը պարպինք:
Պրին. Զեմ ուզեր, չեմ ուզեր, կը հասկնամա:
Յիս. Խմելու է, ճար չի կայ:
Պրին. Ալ բաւական է, քաջ զօրական մը իւր
պատիւը կը ձանչնայ:

Յիս . Այդ ծանր լեզուիդ պատասխանելով ,
ես ալ պիտի ըսեմ որ , տանտիկնոջ մը խորհուրդ -
ներուն կարօտ չեմ , համկցար , լաւ , գնա պառկէ ,
վաղը յուսամթէ աւելի քաղաքավար կըլլաս :

Պրին . Վաղուան համար խօսք չունիմ . գիշեր
բարի , ձրագը մարէ որ վտանգ մը չենէ :

Յիս . Հոգ մի ըներ :

Պրին . (Դէ.) Փառք Աստուծոյ աղէկ խալըսե-
ցայ (Դէնի) :

Յիս . Որո՞ւ մոքէն կանցնէր որ ասանկ լեռնա-
յին տեղ մը այսպիսի առաքինի կին մը կը գտնո-
ւէր , բայց վաղը ասոր երակը աղէկ մը քննել
կ'ուզեմ (Տրնելով իւ ժոկէ) :

ՏԵՍՎԻԼ ԳՅ

Բանիքարէն դուռը բանալով հոնէ . իւ ժոյէ . « և վերին -
հը առաջ է . հողով մը ուրելէտ լցուն :

Բանիք . Այս մթութիւնն ինչըլլալու է , արդեօք
իմ աղուորիկ սիրունիկ Պրիճիտէս քնանալու գա-
ցեր է , քիչ մը կենալ պէտք եղաւ սատեղ , պա-
հածներս կոտրել չեմ ուզեր , կամացուկ մը եր-
թամ իմ Պրիճիտէս սենեկին դուռը փնտում :

ՏԵՍՎԻԼ ԳՅ

Նոյն , Պրիճիտէ (է մըն)

Պրին . Մութը կովեց , կարծեմ թէ գնացած
ըլլալու է մեր պարոնը :

Բանիք . Մօտն ըլլալու եմ , բայց այս խաւարիս
մէջ բան մը չեմ տեսնար :

Պրին . Հոս մէկն ըլլալու է . ինչպէս կը գողամ :
Բանիք . Թէ որ չեմ խարուիր , ոտնաձայն կայ :

Պրին . Առ ո՞վ է :

Բանիք . Ես եմ :

Պրին . Դու ո՞վ ես :

Բանիք . Իմ Պրիճիտէս , ես եմ չճանչցար :

Պրին . Ի՞նչ անիծեալ սովորութիւն ունիս , այս-
պէս գաղտուկ ներս մոնելու , ըսի քեզի ուրիշ
անգամ որ հոս մարդ չեղած ատեն բանալիդ չի
գործածես :

Բանիք . Բայց ամուսինգ գուրսն է . եւ կար-
ծեմ թէ

Պրին . Զգիտե՞ս որ վայրկեան մը առաջ զինո-
ւոր մը եկաւ հոս զիշերն անցնելու :

Բանիք . Վայ թշուաւական :

Պրին . Կամաց խօսէ , կեցիր երթամ ձրագը
առնեմ (Կելթայ) :

Բանիք . Գնա սիրունիկս եւ անհամբեր քեզի
կ'սպասեմ . աս զինաւորին դաւն էր պակաս , որ
համբերութիւնս հատնի , զինուոր բսածդ կնկան
մը հետ մինակ ձգելը աղէկ բան չէ . մանաւանդ

Պրիմիսէի սկս աղւոր աչուի մը . . . ո՞՛ , . . . աչքերս
չորս բանալու եմ:

Պրին. Ահա ճրագը:

Բանկ. Փառք Աստուծոյ որ լոյս աչքով երեսդ
տեսայ:

Պրին. Չայն մի հանէր , այդ զինուորին վրայ
շատ ապահով չեմ:

Բանկ. Յոդնած ըլլալու է որ կը քնանայ:

ՏԵՍԱԳՅԱ Ծ

Նոյնի եւ Յիսնապես (անդուղին գրայէն)

Յիս. (Դէ.) Վարը մէկն ըլլալու է :

Պրին. Ի՞նչ աղէկ բաներ բերիր հետդ նայիմ:

Բանկ. Ահա մեր փոքրիկ ճաշը:

Յիս. (Դէ.) Լու , ես ալ կը ճաշեմ:

Պրին. Կողովին մէջ ինչե՞ր կան:

Բանկ. Մաքառօնեաներ . . . բայց ի՞նչ բան . . .
ըէ . մա , մա , մա :

Յիս. (Դէ.) Մաքառօնեաներուն սիրահարն եմ:

Բանկ. Առքեղի խողի ազգի մը խորոված :

Յիս. (Դէ.) Այդ ալ կը կը կը:

Բանկ. Այս երիշիկը սքանչելի է :

Յիս. (Դէ.) Աքանչելի՛ , որովհետեւ զինի կը
վերցնէ :

Պրին. Հիմա իմելքս կը թուցնեմ:

Յիս. (Դէ.) Ես ալ :

Բանկ. Ասոնք երկու շիշ հին գինի են , որ բա-
րեկամ մը ինձ լնծայեց :

Յիս. (Դէ.) Հին գինի՛ . . . ով բաղդ :

Բանկ. Ի՞նչ կըսես :

Պրին. Սա մաքառօնեաները տաքցնելու է , քա-
ռորդի մը գործ է :

Յիս. (Դէ.) Իրաւ անոնց պաղը չուտուիր :

Բանկ. Գնա ես ամէն բան կարգի կը դնեմ . . .
բայց շուտ եկուր կոկորդս թմբուկ կը զարնէ :

Պրին. Երթալզալս մէկ կըլլայ (պահները կը դանձի):

Բանկ. Սիրած մարդուդ հետ ուտես նէ ա-
խորժակդ կը տասնապատկի:

Յիս. (Դէ.) Խմախորժակս գրդուելու կարօտ չէ :

Բանկ. Սեղանը դնենք:

Յիս. (Դէ.) Ի՞նչ տաք արիւն մարդ է :

Բանկ. 2 սկաւառակ , 2 սրբիչ , զոյգ մը գա-
ւաթ ամէն բան տեղն է :

Յիս. (Դէ.) Խմինս պակաս է :

Բանկ. Երթամ աղ պղպեղ եւ այն բերեմ:

Յիս. (Դէ.) Սըւոր երեսը նայեցէք , տաք տաք
ապտակ մը իջեցնելու ախորժա կու դայ , բայց ա-
նուշութեամբ երթանք:

Բանկ. Այ սիրունկիս , որչափ ալ ուշացաւ ,
երթամ նայիմ ի՞նչ կընէ :

Յիս. (Դէ.) Մի երթար , մի երթար , գործդ
դէ կըլլայ :

Բանկ. Ահ եկաւ (Պրէճէրէ ճրանէ):

Պրին. Մինչեւ որ եկի քիշ մը խօսինք :

Բանկ. Այս աղւորիկս , խօսինք , նայինք սա
զինուոր ըսած մարդդ ի՞նչպէս մարդ է , սպայ է :

Պրին. Զեմ կարծեր։
 Բանկ. Պարզ զինուո՞ր է։
 Պրին. Այդ ալ չէ։
 Բանկ. Ուրեմն ի՞նչ է։
 Յիս. (Դէ.) Հիմա պիտի տեսնես։
 Պրին. Բատ իս վաշչի սպայ մըն է։
 Բանկ. Սո ձախորդ եկաւ, ասոնք անկուտի
 են եւ շատ զուարձանալ կ'ուզեն։
 Յիս. (Դէ.) Ես քեզի կը հասկցնեմ ինչ ըլլալս։
 Բանկ. Թէ որ վաղը ամուսինդ չի դայ, ես հոս
 տեղուանքը պիտի թափարիմ։
 Յիս. (Դէ.) Ո՞ւր տեղէն բրթաւ այս նորաձեւ
 ասպետը։
 Պրին. Վաղը դպրոց չի դայ։
 Բանկ. Ի՞նչ դպրոց, ինչ դպրոց։
 Պրին. Ի՞նչ պիտի ընես, վերջէն չըսին որ . . .
 Բանկ. Բաելիքնին ի՞նչ է, վաղուան տեղ դաւ
 չինգշարթի կաւամամ։
 Յիս. (Դէ.) Աղէկ դասատու մը։
 Պրին. Թէ որ մէկը տեսնէր . . .
 Բանկ. Աւելորդ խօսքեր մի ըներ իմ նազելիս,
 այսպիսի պարագայի մը մէջ զգուչութիւն պէտք է։
 Յիս. (Դէ.) Ես ալ դաս կառնեմ, նայինք ի՞նչ-
 պէս պիտի պատասխանեմ։
 Բանկ. Վշտացած ըլլամ նէ, բարկութիւնս
 տղաքներէն կը հանեմ։
 Յիս. (Դէ.) Այդ տղայոց վրէժնես պիտի լուծեմ
 Պրին. Նայէ՛, եթէ ձախորդ ըլլայ վախճանը
 մէյ մ'ալ տունս ոտք չես կոմեր։
 Բանկ. Հիմա երթանք փորերնիս կշտացնենք։

Յիս. (Դէ.) Երկուքնուդ ալ ախորժակը հիմա
 կը գոցեմ։
 Պրին. Ճրագը առ ու առջեւէն դալէ (Դնէն)։
 Յիս. (Դէ.) Գացէք, գացէք, ես ալ ընելիքս
 գիտեմ, քիչ մը պատրաստութիւն տեսնեմ։

ՏԵՍԽԼ ՁԱ

Պրինիսէ (Պատմական յէւրու) Բանկրատիս (Ֆրանտ և Էմբրէէ)
 Բարբանիկոս (Կէրոնէ)

Բանկ. Վերջապէս հասանք։
 Պրին. Ի՞նչ ախորժակ ունիմ։
 Յիս. (Դէ.) Կ'անցնի, կ'անցնի։
 Բանկ. Ապուրը սրտեղ, խորովիկը հօն։
 Պրին. Երկրաչափութին պէտք չէ', հոս։
 Յիս. (Դէ.) Աս մարդը վայելուչ բաներ դիտէ։
 Բանկ. Սա մաքասանէն մէյ մը ճաշակէ նայիմ։
 Պրին. Մատներս պիտի լզեմ։
 Բանկ. Ես ահա այսպէս կ'եփեմ եփածս։
 Յիս. (Դէ.) Յարձակելու ժամն է (Պրէն Պուրու
 իւ շարունէ)։
 Պրին. Դուռն է։
 Բանկ. Ո՞վ պիտի ըլլայ։
 Յիս. (Դէ.) Առ քեզի փորձանք մ'ալ։
 Պրին. Սըստ դ. բերանդ դոցէ. (Քարձ) ան ովէ է։
 Բար. Ես եմ, Պրիճիտէ բաց։
 Պրին. Էրիկս է, ո՛հ բաներնիս բուսաւ։

Բանկ . երիկդ . . . այ անիծած :

Յիս . (Դէ.) Աս ի՞նչ աղւոր տեսահան :

Պրին . Կեցի՛ր ճրագ մը վառեմ ու հագուիմ :

Բանկ . Վայ կերակուրիս դլխուն , լնցայ :

Բար . (Քրւէ) Պղիձլտէ չի բանաս :

Պրին . Կեցի՛ր սա ճրագը վառեմ , հիմս կուգամ :

Բանկ . Ամեն բան տեղն է . . . գնա՞ :

Պրին . Դուն ո՞ւր կը պահուըտիս :

Բանկ . Զգիտեմ , տենդս բռնեց :

Պրին . Մառանը գնա կծկէ :

Բանկ . Մառանը . ո՞վ երկինք . . . ես որ կը սոսկամ , կը սարսափիմ մուկերէ :

Պրին . Շուտ քեզ նայիմ:

Բանկ . Գթութիւն , մկան ճըզը լսածիս պէս ձայնս կը ճգեմ (իորշը իւ ժոնէ) :

Բար . Պրիձիտէ՛ ի՞նչ կընես չես դար :

Պրին . Հոս եմ (դուռը բանայ) :

ՏԵՍԽԼ կ.

Նոյնե եւ Բարբանիկոս վերարկուաւ

Բար . Այ կատղած . տարի մը դրան տռջեւ սպասեցի :

Պրին . Իմ սիրուն էրիկս , յանձանքը իմս չէ , անկողինն էի , մինչեւ հագուիմ , մինչեւ ճրագը վառեմ դամ ըսի :

Յիս . (Դէ.) Նայեցէք ինչպէս սուտերը իրարու ետեւէ կը դլորէ :

Բար . Հագուելլդ ինչ պիտի ըլլար :

Պրին . Գուցէ հետդ մարդ կայ . ցուրտ ալ է :

Յիս . (Դէ.) Այ թշուառական կնիկ :

Բար . Ինչ ալ կանուխ պառկեր ես :

Պրին . Զինուոր մը եկաւ հոս պատսպարուելու . . . չուզեցի որ . . . :

Բար . Աղէկ ըրեր ես :

Պրին . Վառարանինքովը եկուր , քիչ մը տաքնաս :

Բար . Աւելի անօթութիւն կզգա՞ր քան թէ ցուրտ :

Պրին . Սիրունիկս , տունն ուտելու բան մը չի կայ . . . բերանս բան մը չդրած անկողին մոռայ :

Յիս . (Դէ.) Իրաւ է , խեղճը բան չի կերաւ :

Բար . Խոհանոցն ելիթանք , գետնախինոր կայ տաքցնենք մոխիթի մէջ , գինի ալ կայ , հայ ալ կը գտնամ . այս իրիկուն ալ այսպէս թող անցնի :

Յիս . (Դէ.) Ատ չեղաւ :

Պրին . Երթանք ասկէ . (Դէ.) Հոս կենալ չըլւ լսր (կ'երթայ) :

ՏԵՍԽԼ կ.

Յիսնապէս եւ Բարբանիկոս

Յիս . Բարով եկար պարոն Բարբանիկոս :

Բար . Ատ ո՞վ է :

Յիս . Հիւրդ որ զձեզ ճանչնալ կուզէ :

Պրին . (Ժոնէ) (Դէ.) Աս մարդը հո՞ս . . . վայ ինձ չըլլայ թէ :

- Յար. ի՞նչպէս դիտցար որ:
- Յիս. Լսեցի որ այս կինը իր ամուսինը կը կոչքր ձեզ, ճանչցայ որ հիւրնկալս դու ես:
- Յար. Շնորհակալ եմ ըրած քաղաքավարութեանք, բայց կը կարծէի որ այս ժամուս քնացած ես:
- Յիս. Կը ծխէի երբ դրան զարնուիլը լսեցի, (Դէ.) կնկան մը քով կէս ժամ կենալ բաւական է վարպետ ստախօս մը ըլլալու համար, (Քարշ) իջնելէս վերջը գոնէ փոքրիկ շնորհք մը խնդրեմ ձեզնէ, (Դէ.) հիմա փոթորիկը պիտի ճաթի:
- Յար. Խօսէ նայինք:
- Յիս. Բովս ուտելու բան չունիմ, ստակը տամքէն ինձի կերակուր:
- Յար. Ես ալ քու վիճակիդ մէջ եմ, բայց Պրիճիտէ կըսէ որ բան չի կայ տունը:
- Յիս. Ի՞նչ դժբախտութիւն... ստակով ալ բան չդանուի՞:
- Պրին. Տէ՛ր իմ, այս ժամուս լերան մը ծայրը ի՞նչ ուտելիք պիտի դտնաս:
- Յիս. Գլուխս սլատին զարնելու եմ:
- Յար. Հաւկիթ ալ չի կայ տանը մէջ կնիկ:
- Պրին. Հատ մ'ալ չի կայ:
- Յար. Յուսահատելի բան է:
- Յիս. Կը մոռած եմ:
- Յար. Ի՞նչ բանի:
- Յիս. (Դէ.) Հրացանը պիտի սլարպեմ. (Քարշ) ի՞նչ դդում գլուխս ունիմ, գտայ, դտայ:
- Յար. Ի՞նչ:
- Յիս. Ուտելու կեր:
- Յար. Ի՞նչպէս, ըսէ տեսնեմ:

- Յիս. Ուրախ եղիք, հիմա աղէկ մը կուտենք, ամեն բան գիտնալն ալ ի՞նչ աղէկ բան է:
- Յար. Ըսէ նայինք:
- Յիս. Վրաս պիտի ինդաքք. բայց հոգ չէ, ունուոր եմ:
- Յար. Ասիկայ կերակոյ հետ վերաբերութիւն չունի:
- Յիս. Մ'աճապարեր, Սպանիոյ պատերազմին առենը վհուկ մը ճանչցայ:
- Յար. Ատ ի՞նչ գէլ բան:
- Յիս. Այն կինը ինձի շատ դիւթութիւններ սովորեցուց:
- Յար. Գնա սրկեց գնա. ո՞ւր տեղէն գլխուս փրթաւ, այս դիւթիչը, այս մոդը:
- Յիս. Մ'ի վախնար, իմ դիւթութիւններս միշտ աղէկի կելլեն. ես կարող եմ օրինակի համար զիս ասող կնկան մը ինքզինքս այնչափ սիրցնել, որ դայ սորս պըլլուի. կնկան մը անհաւատարմութիւնները երեւան կը հանեմ, ուրուականներ կը ցուցնեմ, ասկէ զատ կարող եմ կերակուրներ աներեւութացնել, եւ ամենահեռաւոր մարդիկ հոս բերել ուզածիս պէս:
- Յար. Ատիկայ սպառն ինձի չես կրնար կըլլեցնէր, փորձը, փորձը տեսնեմ:
- Յիս. Տասը վայրկեանէն հրաշքը երեւան կելլէ:
- Յար. Ի՞նչպէս:
- Յիս. Երթամ մոգական մատեանս եւ հրացանիս սուինը առնեմ. երիու ճրագ պատրաստէ, մնացածը ինձի թող. երթամեւ կուգամ. («Ենէայէ կէրենյ»):
- Յար. Դու ի՞նչ կըսես ասոր կնիկ:
- Պրին. Ես կըսեմ որ յիմար մ'է:
- Յար. Զգէ նայինք ի՞նչ պիտի ընէ սըվիկայ:
- Յիս. Ահաւասիկ եմ: (Քրեւել և սոսինով)
- Յար. Ես ալ քեզի կ'սպասէի. բայց թէ որ չի լաջողիս. պիտի խնդանք վրագ. չի վշտանաս:

Յիս. Զեղի բան մը ըսեմ. ես պատուաւոր մարդ մըն եմ. թէ որ ըսածս չընեմ, հօ ոսկի կուտամ, թէ որ յաջողիմ խօսք տուէք որ զիս ձրի պիտի սնուցանէք, քանի որ հոս եմ. կընդունի՞ք:

Բար. Անշնուշտ:

Յիս. Փորձի սկսինք, բայց պէտք է որ գիտամ թէ տանը մէջ ո՞վ կայ:

Բար. Գէշ սկսանք:

Յիս. Ես աշխարհիս մէկ ծայրէն խօսք կուտամ հոս բերել կերակուրներ, նայինք որո՞ւն կերակուրը պիտի վերցնեմ:

Բար. Իրաւ չգիտեմ:

Յիս. Այս, Սարձանիոյ գիւղին մէջ զիս ամենէն ետքը հիւրնկալողին, որ ուշ եւ լաւ կը ճաշէ:

Բար. Սարձանիա... մեր բնակած գիւղն է, ո՞վ կրնայ ըլլալ այդ թշուառը:

Յիս. Գիւղիս վարժապետը, որ աղէկ դաս կըրնայ տալ որկամուռւթեան:

Բար. Գիւղիս վարժապալմոը, ի՞նչ աղէկ բան, այս վարժապետ ըսուածները քանի մը մարդու չափ կուտեն:

Պրիմ. (Մէկ) Վարժապետին անունն ալ տուաւ... հիմա կը կորսուիմ:

Յիս. Ճրագները գեղին չըլլալուն այս գեղին թղթով քիչ մը լրաց վարագուրեմ:

Բար. Այս ի՞նչ վախ է սրտիս մէջ:

Յիս. Զեւերէս վարմունքներէս, ըսածներս եւ ըրածներէս բնաւ մի վախնաք:

Բար. Շունչս կը բռնեմ, ահա:

Յիս. Մոռցայ ըսելու որ մարդ գտածը ուտելուէ:

Բար. Ուտելու բան ըլլալէն ետքը, ի՞նչ որ ըւլայ կուտեմ:

Յիս. Երժամ:

Պրիմ. Կը սարսափիմ. (Յիսասդէաը ի՞որը + աշւելու)

Բար. Կին դու ի՞նչ կըսես, չըլլայ որ վախնաս բան մը ըլլաս:

Պրիմ. Քեզի պէս խենդ չեմ:

Յիս. Կաց հրազէն եւ ուումք ... երդուեալ յանուն դժոխոց... կեցի՞ր:

Բար. Ո՞վ կը կանչէ:

Պրիմ. Սատանան կը կանչէ որ զինքը ասկէ տանի:

Բար. Աս իրիկուն դուն կատղեր ես:

Պրիմ. Հրամմեր ես:

Յիս. Բարբանիկոս դեռ չի ճաշէց:

Բար. Այս պարտն դեռ չի ճաշէցի:

Յիս. Հիմա կերակրոց անումը կու տամ, նախ երեւիկ կայ. ակռայիդ կուգայ:

Բար. Ի՞նչ ըսել է... անով աղէկ կը խմուի. բայց ոյժ տուող բան մը չիկայ:

Յիս. Ուրախ լեր, մեծ սկաւառակ մը մաքառնեաներու:

Պրիմ. (Մէկուսէ) Այ անօրէն զիս կը մատնէ:

Բար. Կնիկս մաքառոնեայ կայ:

Պրիմ. Խմ ախորժակս գոցուեցաւ:

Յիս. Բարբանիկոս աւելի աղէկն ալ կայ, խոզի մը խորոված աղդրը:

Բար. Խոզի մը աղդրը, ո՞վ աստեղք ալ բաւական է. մնացածն ալ իրեն տուր որ ուտէ:

Պրիմ. (Մէկ) Այ չարաձձի:

Յիս. Ո՞չ, ունեցածը չունեցածը պիտի վերցնեմ:

Պրիմ. (Մէկ) Կայծակ ի՞նայ գլխուդ:

Բար. Զէ քարասալիտ մ'ըլլար, իրեն ալ ուտելու բան մը ձգէ:

Յիս. Ահա մնացորդը, աղցան, պանիր, հաց, եւ շիշ դինի:

Բար. Ո՞վ իմ մանիկս:

Յիս. Գտիր նայիմ, այս ամենը ո՞ր կողմը բերել տուի:

Բար. Ո՞ր կողմը:

Յիս. Հոս, վարի մառանը:

Բար. Շուտ երթանք նայինք :
 Պրին. Բանալին վրաս չէ :
 Յիս. Սուխն բանալիիդ տեղը կը բռնէ :
 Պրին. (Մէկ.) Օր առաջ լմնայիր :
 Բար. Նայէ որ չի կոտրես :
 Յիս. Ինծի թող, հոս բանալի մը կայ, տես-
 նենք կը յարմարի՞ :
 Բար. Այս Ե՞նչ կարգէ դուրս բան . սըւոր նա-
 յինք վերջը ո՞ւր պիտի երթայ :
 Յիս. Այս իր բանալին է եղեր . նայեցէք դուրս
 բացուեզաւ :
 Բար. Ո՞վ անակնկալ հրաշք :
 Յիս. Ահա բոլոր ըսածներս : (Կողազն կառակէ)
 Բար. Սըվոնք ուտենք, կնիկ՝ ելիր ամեն բան
 պատրաստէ :
 Պրին. Տեղէս չեմ երերար, խենդենալբւ միտք
 չունիմ :
 Բար. Անուշութեամբ խօսք չի հասկնաս նէ,
 կերպա կը փոխեմ :
 Պրին. Ահա սեղանը : Կեր խմէ, ճաթէ . (Դէ.)
 կերածնիդ փորերնուդ մէջ օձեր դառնան :
 Յիս. Ապրիս Պրիճիտէ .
 Բար. Նստէ կեր նայիմ աղւորիկս :
 Պրին. Ե՞ս ուտեմ, թոյն դառնայ :
 Յիս. Բարկութիւնդ ինչքն է :
 Բար. Իմ սիրունիկս, իս մտիկ ըրէ, նստէ
 կեր, թէ որ ձեռքերուս ուժը ճաշակել չես ուզեր :
 Պրին. (Մէկ.) ալ համբերութիւնս կը հատնի :
 Յիս. Քեզ տեսնեմ Պրիճիտէ :
 Բար. Ի՞նչ երշիկ, ը՛ըըը :
 Յիս. Ինչ կըսես հրամանք տիկինն :
 Բար. Սա մաքառօնիներուն ալ համն առնենք :
 Յիս. Կեցիր բաժնեմ, աս չափը մեր տիկնո՞ . . .
 աս չափն ալ ինծի . . . աս ալ քեզի :
 Բար. Մա մա մա, աս ի՞նչ համով առն :

Կըլայ . . . աս տեղէն ան տեղէն ըսելով, բոլոր
 աղէկի բաները իրենց բորը կը նետեն :
 Բար. Մեր գեղի վարժապետն ալըսածիդ պէսէ :
 Յիս. Հո՞ս ալ վարժապետ կայ . կը ճանչնան
 զինքը :
 Բար. Շատ . . . իմ կողակցիս մասնաւոր բարե-
 կամն ալ է :
 Յիս. Սիրուն Պրիճիտէ, զինքը այսպէս աղէկ
 ճանչնալէդ ետքը, սա մեզի հանդիպածը պատ-
 մէ, աղէկ մը թող ինտոյ :
 Պրին. (Դէ.) աս սրիկան ո՞ւսկից գլխուս վըլ-
 թաւ :
 Բար. Ի՞նչ եղեր ես այս իրիկուն կնիկ :
 Պրին. իենդ . . .
 Բար. Ըսէ ըսէ, սա սեղանը վերցուր նայիմ.
 (Ի՞նչ բարեւ-նեամբ ուշնու վերցնէ) Ի՞նչ կընես . . . պար-
 ծենալու համար չէ, բայս ես այն էրիկներին չեմ
 որ կնիկներնէն կը խաբուին . այն էրիկներնէն, որոց
 գլխուն կնիկներնին զանազան բաներ կը բուս-
 ցընեն . կը հասկնամու :
 Յիս. Կը հասկնամ . (Պէճ. կը Դիչէ)
 Բար. Ինչ է սէ սիրեցեալ յիսնապետ, եկուր
 քեզի համբոյր մը դրոշմեմ . . . բայց չէ . . . մոգէն
 կը վախնամ . . . սա ըսէ ինծի հիմա ո՞ր դրաւս
 կորսնցուցի . . . ինծի շնորհ մը կընես .
 Յիս. Համարձակ խօսէ :
 Բար. Սա մոգութիւնդ ինծի ալ սորվեցուր,
 վասնիշատ անդամ գործածել պէտք կըլլայ ինծի :
 Յիս. Վերջէն ասոր վրայ կը խօսինք, հիմա
 սոսկալի գիւտ մը ցուցնեմ, որ իմ մեծ մոգական
 գրքիս մէջ կարդացի, բայց չի սարսափիս :
 Բար. Ի՞նչ, սոսկալի գիւտ . . . Հիմակուց քիչ մը
 կը դողամ, գիւտդ ո՞րն է :
 Յիս. Բան մը

Բար. Շուտով ինչ է նէ զուրցէ:

Յիս. Զնչին բան, տանդ մէջ ուրուական մը պահած ես, որ քիչ մը հանգստութիւնդ պիտի աւրէ:

Բար. Ուրուական . . . ահ գթութիւն:

Յիս. Հոգ մի՛ ըներ, ես անիկայ կը վոնտեմ:

Բար. Բայց որ կուլմ է, բայց որ սիրառ հանգստանայ:

Յիս. Հաւատալիքդ չի գար, մառանը պահաւուստած է:

Բար. Մառանը . . . վայ ինձ:

Յիս. Բնաւ աչքիդ զարկած չէ:

Բար. Ոչ . . . բայց . . . այս . . . երբեմն:

Յիս. Բան մը իմացած ես:

Բար. Չ'դիտեմ. դող մը առաւ զիս:

Յիս. Տղայութիւնը մէկդի թող, հոս եմ ես:

Բար. Կեցիր.

Յիս. Ի՞նչ կայ:

Բար. Պրիճիտէ, Պրիճիտէ:

Յիս. Ի՞նչ կուզես:

Բար. Ստուգիւ եմ, Պրիճիտէ, Պրիճիտէ:

ՏԵՍԽԼ Ծ

Նոյնի եւ Պրիճիտէ:

Պրիճ. Ի՞նչ կուզես:

Բար. Եկուր հարցուցածիս պատասխան տուր:

Պրիճ. (Դէ.) Վայ թէ որ զիս մատնեց:

Բար. Տանը մէջ բան մը իմացար:

Պրիճ. Բան մը . . . ի՞նչ բան:

Բար. Մինակ եղած ատենդ վայնասուն մը լսեցիր:

Պրիճ. (Դէ.) Փառք Աստուծոյ, (Բարձր) Ի՞նչ աղուր հարցմունք. չես գիտեր որ այս լեռներուն

վրայ հովը տուներն անգամ կերերցունէ:

Բար. Ի՞նչ հով, ի՞նչ լեռ . . . ի՞նչ տուն, մառանին մէջ խոշոր ուրուական մը պահուած կայ եղեր:

Յիս. (Դէ.) Ով հարուած:

Պրիճ. (Դէ.) Կորսուեցայ. (Բարձր) տէ՛ր յիսնապետ Աստուծոյ սիրուն ըլլայ . . .

Յիս. Մի՛ վախնար ես ան կը փախցնեմ:

Պրիճ. Կաղաչեմ որ . . .

Յիս. Ասկէ հանեմ զինքը, այնպէս չէ:

Բար. Վերջը:

Յիս. Սիրու առ Բարբանիկոս. աղւոր տեղը հասանք, ձեռքդ փայտի կտոր մը առ որ ըսածս ընես:

Պրիճ. (Դէ.) Իյեղճ Բանկրատիոս:

Բար. Աստուծոյ համար կոռուի մէջ մի՛ դներ զիս . . . ընտանեաց տէր մարդ եմ:

Յիս. Վատասիրու մարդ, գաւազանը ձեռքդ առ, եւ մի՛ վախնար. քեզի նշան ըրածիս պէս, ուրուականին վրայ ինկիր, ու աղէկ մը ծեծէ, մէյմ'ալ հոս չիգար:

Բար. Ձեռքէս եկածը կ'ընեմ:

Յիս. Ուշադրութիւն . . . գործի կ'ըսկախմ. (Տառանք բանալով)

Բար. Գթութիւն:

Պրիճ. (Դէ.) Հիմա կը մեռնիմ:

Յիս. Ոգեգդ ուրուական. քեզի կը հրամայեմ ըրէ՛ ըսածս, ո՞վ անդնդապետ:

Բար. Ի՞նչ ալ սոսկալի անուն:

Յիս. Ե՛լ կըսեմ քեզի ուրուական, պատուհանին կընայի հանել քեզ, բայց գոհ կ'ըլլայ դռնէն վրնտելով, ահա բաց է, Ե՛լ կըսեմ: (Դառաւ իշխանաց)

Պրիճ. (Դէ.) Ա՛հ Բանկրատիոս:

Յիս. Շուտ ելիր կը կրկնեմ քեզի, Եթէ ոչ խայտառակաբար կը հանեմ քեզ. կը հասկնամ . . . վրէ՛ ժիննդրութենէս վախցիր . . . : Բարբանիկոս պատրաստ կ'եցիր:

Յիս . Փալսիր չար ոգի . . . ահա կուզայ , պատ-
րաստուէ : (Բանկը առաջին վերաբեր ծածկուած էլլուէ)
Քար . զթութիւն .
Յիս . Ահա քեզի ճամբայ կը ցուցնեմ , քեզ
տեսնեմ , հապ օն : (Է ծեծէ)
Քար . Այ , ի՞նչ սսկալի սեւ սատանայ . (Է
ծեծէ)

Յիս . Իր եղիւրներն ուրիշի վրայ են : (Է ծեծէ)
Քանիկ . Այ այ . օգնութիւն Պրիմիտէ , Պրի-
միտէ . իմ սիրուն Պրիմիտէս . օգնութիւն . (Գաբրէ)
Պրին : (Գէ) Հիմա կը մեռնիմ :
Քար . Ի՞նչ սարսափելի ձայն , տեղւս երերա-
լու կը վախնամ :

Յիս . Ակայ քեզի :
Քար . Ահ . . .

Յիս . Մի վախնար ես եմ :
Քար . Ի՞նչ , դժուն ես , ոչ քովէս մի երթար .
Կէս ողջ , կէս մեռած եմ :

Յիս . Հապա դու ի՞նչ կ'ըսես , տիկին Պրիմիտէ :
Պրին . Կը հարցնես դեռ :

Յիս . Փոթորիկը անցաւ , սիրու առ :
Պրին . Այս , բայց . . .

Յիս . Ինչ է նէ . եղածը եղած է , անցածը
անցած , երթանք հանգչինք , խօսք կուտամ որ ալ
քեզ այս գիշեր անհանգիստ չեմ ըներ . . . մինակ
սա վոքրիկ խրառը կրնանք առնել եղածներէն
թէ շատ անգամ կը պատահի որ , մէկը ծախքեր
կընէ , եւ ուրիշ մը կը վայելէ :

«Ազգային գրադարան



NL0242613

